




Տարեկան դիմել 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка 50%.

Плата впередъ.

За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубль.

На первой страницѣ „Мшака“ никакія постороннія объявленія не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքակիրթ մարդկության երեք աստիճան:
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անկող հիւրեր. Մեր ընտանեկան կեանքի մի փոփոխություն. Նորին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չարիքի կարծիքները եւրոպական քաղաքականության մասին. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՂԱԲԱԿԻՐԹ ՄԱՐԿԻՆԻՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՆ

Ոչ մի ժամանակ քաղաքակիրթ մարդկությանը նուիրված մտածողները այդքան խստութեամբ չէին քննադատում նոյն իսկ քաղաքակիրթության թերի կողմերը, որքան այժմ Գրականության այդ տեսակ ուղղութիւնը ստեղծեց եւրոպայում գրողներին մի ամբողջ շարք, որոնց թուում էր դառն, անխել, մարտիկ կրթական պահանջարկի անկումը անշուշտ տեղը բռնում էր դերմանացի Մակս Դորստը: Այն աղմուկը որ մի քանի տարի առաջ հասնել ամբողջ եւրոպայում նրա յայտնի դիրքը „Die Conventionele Lügen der Kulturmenschheit“, բացատրվում է նախ դրականության մէջ մինչև այժմ չընդունված նրա բացարձակ և համարձակ լեզուով և երկրորդ այնպիսի ճշմարտութիւններով, որոնց արտայայտելը մինչև այժմ ընդունված չէր գրականության մէջ:

Մակս Դորստը շոշափում է իր զգրում ժամանակակից քաղաքակիրթ մարդկության մէջ առաջին տեղը բռնող երկու գլխաւոր հարցեր այն է քաղաքական և սոցիալական հարցերը:

Բայց ինչ որ ամենահետաքրքիր մասն է կազմում այդ տարանջատը և արդէն մեծ հաշակ ստացած հեղինակի գրութեանը,—այդ ժամանակակից մարդկության բարք ու վարքերի նկարագրին է: Մակս Դորստը համարում է մեր ժամանակը մի անցողիկան ժամանակ, նման այն դարին, երբ հրեւոսական կայսրութիւնը ընկնում էր և նրա սահմանների վրա արդէն երեւում էին բարբարոս ցեղերը. բայց սրանք առողջ, թաւալ, զօրեղ էին, կարող էին վերանորոգել ընկած և փշաքանդ քաղաքակիրթ մարդկութիւնը: Իսկ այժմեան քաղաքակիրթութեանը, որ շատերը ծերացած են համարում, ի՞նչ թաւալ պէտք է նուրի, ի՞նչ նոր հոսանք պէտք է վերածնունդի: Նրան պէտք է վերանորոգի մարդկության այն մասը, որ բանասիրական, սոցիալական շարժման զրօշակ է կրում,—այն ժամանակ նոյն իսկ մարդկության այդ դասակարգը իր բարք ու վարքի, իր ֆիզիկական առողջութեան կողմից պէտք է անհամեմատ բարձր լինի ժամանակակից մարդկային հասարակութեան միւս դասակարգերից: Բայց, ընդհակառակը, մենք տեսնում ենք թէ մեր Չ զայիւն (նեքլային) դարի գլխաւոր երեք օրէն և 2-րդ նոյնքան և զուգե աւելի էլ տարածված են ստորին դասակարգի մէջ, բանասիրական շրջաններում: Այդ երեք աստիճանը, կամ թղթերը, որոնք տարածված են ժամանակակից քաղաքակիրթ մարդկության բոլոր դասակարգերում, որոնք թէ ֆիզիկական և թէ բարոյական թուլացումը մաշում, սպառում են

մարդկութիւնը՝ սրանք են. օղին, թամբաբուն և սիֆիլիսը:

Այդ երեք աստիճանի մասին, ինչ որ ասում է Դորստը, որպէս պոլիցիստ,—նոյն մտքերը յայտնում են նրանց մասին, որպէս մարդկութիւնը ֆիզիկական և բարոյական աւերող աստիճանի մասին՝ բոլոր ժամանակակից եւրոպական յայտնի բժիշկները: Եւրոպական դժգոհութեամբ հիւանդների մի յայտնի տոկոս նրանք են կազմում, որոնց խնդրագրութիւնը վերաբերում են կամ սիֆիլիսին, կամ օղիի անշուշտ զործածութեանը, կամ թամբաբուի անշուշտ ծխելուն:

Այդ երեք աստիճանի դէմ եւրոպացի դիտարկողները պրոպագանդան մեծ է այժմ եւրոպայում և այնտեղից նա անցնում է և Ռուսաստան: Վերջին ժամանակները ուսուսաց դիտարկողներն էլ սկսեցին իրանց գրութեանը ու հրապարակական դասախոսութիւններով մաքառել քաղաքակիրթ ժամանակակից մարդկութեան այդ գլխաւոր աստիճանի դէմ:

Այդ ուղղութեան գրութեանը իրանց վրա գլխաւորապէս ուշադրութիւն են դարձնում հետեւեալ գրութեանը Ռուսաստանում բժշկական ինքնագիր „Три яда: табакъ, алкоголь и сифилисъ“ գրութեանը և Կալանի համալսարանի պրոֆեսոր Դոգելի „Табакъ какъ прихоть и несчастіе человѣка“ գրութեանը:

Մշակույթ հետեւեալ համարներում մեր կայսրութեան բանասիրական բաժնում, որքան կը ների մեզ լրագրական շրջանակը, ծանօթացնել մեր ընթերցողներին պալ, Դոգելի և Կալանի յայտնած մտքերի հետ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿՈՑ ՀԻՄՆԵՐ

Մօսկվա, Մօսկվա, միջան հրապարակ էս երեւում դու մեր անհեռառու աչքերին. քո անունը միջան յոյսեր, միջան գեղեցիկ ապագայ, միջան փառք է խոստանում երազանք մարդկութեանը. ինչ հիւստանք պատկերներով, օղակն ամբողջութեամբ բարեբաւում էս դու անհորձ երիտասարդների երեւակայութիւնը...

Յիշենք կողմնակի կերպով, որ սկսեալ այն օրից, երբ գրեւորաւ Մօսկվայի շնորհեան առաջին երբ, օրինակի առաջին ժամանակները դարձան և դարձան մի այդ քաղաքը իր ամեն մի մասներով: Բարեկրթութեան մի անտուր շարժում նկատելի է մանաւանդ այս վերջին մի քանի տարիների ընթացքում: Ով որ տեսնել է Մօսկվան սրանից մի 10—20 տարի առաջ, այժմ մի անգամ էս այցելելով այդ քաղաքը, կատարեալապէս համաձայն կը լինի մեզ հետ և կը համոզվի մեր ասածները ճշմարտութեան մէջ: Նորեկ այցելում այժմ հիացմունքով է նայում այն գեղեցիկ բարեկրթութեանը վրա, որոնք նկատելի են ամեն մի քաղաքականում:

Ես ճանաչում եմ երիտասարդներ քաղաքում, ամբարկաղ, սակաւ ինչ ուսած, որոնք հայրենիքը թողած, ամեն աշխատանք և յոյսութիւն պահանջող գրադմուսը արհամարհելով եկել, ընկել են Մօսկվայի մէջ առանց աշխատանքի մի որոշ ճանապարհ, և կամ դռնի հասարակ կեցութեան մի

չափաւոր աղբիւր ունենալու: Ինչն է ստիպում այդպիսի երիտասարդներին երեսի վրա թողնել այն բոլորը, ինչ որ մինչև այն ժամանակ նրանց շրջապատն էր կազմում, որի մէջ նրանք ծնվել և մնալ են, և դնալ թափառել հեռաւոր քաղաքներում, ուր շատ քիչ բան կայ, մինչև անգամ ոչինչ մեր երկրի կեանքի և պայմանների հետ համահունչ: Բազմ օրոնեւ—ահա այն երիտասարդների նպատակը. առանց չարչարվելու, առանց տանջվելու հարուստ լինել—ահա բոլորի ցնորքը:

Մի դիւրից կամ քաղաքից գալիս է Մօսկվա մի այդպիսի բանտարանի տղայ վաղորդ արդէն իր գլխի մէջ որոշած ունենալով իր գործունէութեան ամբողջ ծրագիրը:—Համարձակ կերպով զործ միջոց, հայ հասարակութեան մէջ մանկույթ նրա հետ մերտ յարաբերութիւններ կապելով իր համար ապրուստի ճանապարհ բանալ,—հա չէ ընդունում. այդ բոլորը իր գաղտնի խորհուրդներին կարող են արդեւ լինել, և այդ իսկ պատճառով զուգե Մօսկվա է շտապել, որպէս զի մայրաքաղաքի բաղնիքն մէջ աննկատելի մնան թէ ինքը և թէ իր մոլթ արարելները:

Քաղաքի կենտրոնից շատ հեռու, մի որ և է խուզ փողոցում և կամ հայի համար անհաղորդ հրապարակի վրա նա վարձում է իր համար մի սենեակ: Իր հետ բերած, և պարտքով ձեռք բերած քանի մի բոլորից որոշ է դնում արտաքին ցոյցերի համար, հաւատացնելով տանտիրուհիներին կամ հարեաններին և կամ նոր ծանօթներին, թէ ինքը այս ինչ աղնուական ծագումն ունի, տարեկան այսչափ մեծ գումարի եկամուտ է ստանում, կամ այս ինչ յայտնի ընտանիքների հետ մշտական յարաբերութեան մէջ է, և վերջապէս պատմում է իր անցեալից հետաքրքրական սիրադրոշմութիւններ: Բայց ցուցելով պէտք է անհրաժեշտ, որ այդ իսկ երիտասարդը, որ այդքան առաւելապէս խօսքեր է շտապում դիւրաբար աղբիւրների առաջ յայտնի նպատակների համար և կամ գեղեցիկ այլ տանտիրուհուն է խաղում իր ձեռքը և ամբողջ հարստութիւնը ու աղնուականութիւնը նրա ոտքերի առաջը դնելով, մի ժամ յետոյ իր առանձնատնեակը վերադարձած մի կտոր հաց չունի քաղցած ստամոքսը կերակրելու համար:—Այսպէս անցնում է ամիսը, և սենեակի տէրը ամսական է պահանջում, ճաշարանին փող պէտք է վճարել, ծառան իր վարձն է ուղարկում Պարոնը: Եւ ամբարկաղը մի գեղեցիկ առաւօտ անյայտանում է, տանելով իր հետ իր ամբողջ հարստութիւնը, և անունը, և ծագումը: Քաղաքի մի ծայրից նա թռչում է մինչև միւս ծայրը և այնտեղ հետ հետ անցնում չէ կարող դանել նրան Մօսկվայի լաբիրինթոսում: Նոյն խաղը մեր հերոսը կրկնում է և այն նոր կացարանում, ապա երրորդում, չորրորդում և այլն, մինչև որ մի տեղ յաջողում է դործը գլուխ բերել:—մի համեղ պատառ ձեռք:—Բայց խոստովանելը այստեղ, որ դործ գլուխ բերելը ամեն մարդու դործն է շատ քիչին է աջողվում, որովհետեւ այստեղ ոչ այնքան վարժութիւն և հմտութիւն է դեր խաղադրող, որքան ստանալական ճարպիկութիւնը, որը մի արտակարգ ընկալուն ձիւր է: Իսկ այն կամաւոր դոճերը, որոնք իրանց արշաւանները աջողութեանը պատկել են կարողանում են, նրանք ենթարկվում են ամօթարեւ և մահացուցիչ վախճանի:

Եթէ հնար լինէր քայլ առ քայլ հետեւել այդ շրջմունքներին, դուցէ շատ անգամ պատահէր նրանց մի հրապարակի վրա ծալեալ հաղուստում, ուսին ձգած մի փողովի արկով, լուցիկ, վախ և կամ տրակտոս ծախելով: Բայց որ աւելի վատ վարքիցների բերանին կանգնած ամեն անցորդի ձեռքը պարզվում... Նա անպատճառ պէտք է ուղարկվում խնդրի, որովհետեւ ընտելութեան շատ անգամ է և հանդամներին երթալայ չէ լինում. նա իր սրտանքներն ունի, իսկ ցրտից ստանաւ և լիտասարդը մի կօպէկ չունի դրամում մի կը:

տոր ցամաք հայ դնելու համար: Այդպիսի դէպքերում կամ ոտտիկանն է նրան հիւրասիրում պըրիտավի մօտ և կամ օտարազգի հովիւ, որին դիմում է մեր բանտարանի երիտասարդը իր հաւատը վաճառելու:

Հեշտ հարստանալու տենչը շատ շատերի համար ցնորք է դարձած և դէպ եղած ժամանակը այդ նպատակին հասնելու համար ոչինչ սրբութիւն չէ կարողանում արգելադրել լինել: Մօսկվայում ով չէ լսել յայտնի Կոստայի կորցրած 120,000 ռուբլու պատմութիւնը, բայց նրա փառաւոր իւրացուցման մէջ մասնակից էր և մի հայ, որի անունը մայրաքաղաքի լրագրութեան մէջ փայլում էր իր ամբողջ տառադրութեամբ ի տարծանս մեր աղբին:

Բայց այսպիսի դէպքեր բացառական դէպքեր չեն:

Չը դիտեմ ճանապարհորդութեան, աշխարհներ տեսնելու ցանկութիւնն է, թէ մի այլ գաղտնի նպատակ, որ շատ անգամ հայրենիքից հարկաւոր և հազարաւոր վերադարձող հետո է փախցնում ոչ միայն հայ երիտասարդներին, այլ և ծերութեան տակ կորացած, դառնալով մարդկանց: Մօսկվայի փողոցներում, ժամի դրանք, յաճախ ձեր բնակարանին չենքին, դուք կը պատահէք մի սպիտակամորթը, ձերմակ մազերով, ցուպը ձեռքին, ցնցոտիների մէջ մի մարդկային պատկերի: Դուք բացելուց ապա նա սկսում է արդէն այն աղերսական և խղճով պաղատանքը, որ այնպէս տանում կերպով և մէկը միւսին ետեւից դուրս են թափվում նրա բերանից. նա խնդրում է, և աղաչում է, և լալիս է, և օրհնում է...

—Որտեղից որտեղ, յանկարծ բացականչում ես դու, տեսնելով դիմացը մի հին ծանօթ պատկեր, —ախար ինչո՞ւ համար ես եկել Մօսկվա, այս օտար քաղաքում ո՞ւմ վրա ես յոյսդ դրել, մի՞թէ հայրենիքումդ դործ չը կար, քեզ համար պարագանքը չունէիր, կամ, մի՞թէ այնտեղ ողորմութիւն խնդրել չէիր կարող: Չէ որ Մօսկվա, և այլ այսպիսի հեռաւոր քաղաքներ դնալով աւելի շատ ծախս կունենաս, քան թէ ինքդ կարող ես հաւաքել սրտ և նրա դուք ծննդով:—Բայց նա քեզ լսել անգամ չէ ուղում և դուցէ իր սրտում բարկանալով, որ նրան խրատներ ես կարդում, շատանալով է երգել իր շարականը: «Աղա, հոգուդ մոռնում, հաց չունեմ, տեղ չունեմ, ճար չունեմ»... Վերջապէս ով է սրանց տէրը, ով հոգատարը, ուր են արթնում հովիւները, որոնց ոչխարները ցրվում են:

Այս մասին չեմ կարող չը պատմել մի դէպք, որին ես անձամբ ականատես էի: Մի այսպիսի թշուառ ընտանիք՝ հայրը, մայրը և երեք փոքրիկ երեխաներ, որոնցից երկուքը դեռ գրկի էին, լըսելով Մօսկվայի մեծ բարեբաւների անունները, եկել նստել էին մի հարուստի տան բազում աղաքի սեղանից մի կտոր փշաքանդ ստանալու համար, բայց բարեբաւը ազան, որ գիշեր և ցերեկ Արդոսի աչքերով հսկում է բանկայի կասսայի վրա, պատուիրել էր ծառաներին դուրս անել խնդրողներին, իսկ ծառաները իրանց կողմից դիմել էին ոտտիկանին, որը սպառնալիքներով վաճառեց խեղճներին, իսկ փողոց դուրս եկած ժամանակը հայը և հայութիւնը ծաղրածութեան առարկայ դարձրին:

Մօսկվա.

Գ.

ՄԵՐ ԸՆԴԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԻ ԳԻՏ

Մի տուն, որ չունի իր օրինաւոր կարգ ու կանոն և պարզութիւնը, նրա վերջը թշուառ կը լինի, նոյնպէս թշուառ կը լինի այն ընկերութեան ապագան, երբ նրա ուղղութիւնը և դործերի կառավարութիւնը հաստատված են նախապետական հիմունքների և տեղային խախտում սովորութիւնների վրա: Մենք՝ հայերս պարզութիւն չենք սիրում. պարզութիւնը մեզ համար թէ բարոյական և թէ տնտեսական կեանքի մէջ ընդունված է իր յանգցնութիւն, երեսացութիւն: Բայց երբեք կամ ընկերների մէջ էյամով պիտի

անուր, առանց երեսի վարադրոյը բացելու, առաւել է ծածկանքն պարզութեան թշնամի հայր։ Վայ է, թէ որ տան կամ ընկերութեան անդամներին մինչ նկատելով միմեանի թիւր ուղղութիւնը, բարձր նշանք դէմ, սա նրա կողմից յանդգնութիւն և առաջ եղբայրներին կամ ընկերներին վարելի դէմ մեղանշել կը համարվի։ Մեր աչքերի առջև այսօր կանգնած են շատ հարուստ տներ կործանման պատկերները. մենք տեսնում ենք եղբայրներ, որոնք ժառանգելով իրանց հօրից մի նշանաւոր գումար և ապրելով իրար հետ առանց օրինաւոր պայմաններին, առանց անտեսական կանոնաւոր օրէնքներին, մինչ աշխատում է, միւսը շուտով է, մի երրորդը ուրիշներին զրկելու նպատակով եղբայրամիջից իր համար առանձին թաղանթ է, բայց մի և նոյն ժամանակ իրար ջանքը և դործերի վատ ուղղութիւնը տեսնելով, սրանք երկուստեք իրար դիմադրելով անկողին մէջ անքուն տողովում են, նախանձը ուռում և լսիւմ է զրկւողներին սիրտը, բայց ցերեկները դարձեալ իրար հետ դրժում են, եղբայրական սիրտն քաղաքական ձև տալով, իսկ մահացուցիչ նետը սերտեցում թաղանթի լուսն են բռնակալ վարելու առջև, մինչև որ անկարգութիւնը և համբերութիւնը իրանց վերջի ծայրին հասնելով տեղի են տալիս մեծ տարածայնութիւններին, այս, արիւնհոգութեան անգամ և մի ժամանակ իրար հետ էջամով խօսող, ճշմարտութիւնը պարզ քրիստոնէական իրար ասելու ամառնող եղբայրները այժմ շուկաներում հրապարակաւ օտարների առջև իրար դուրս են ջարդում։ Վերջապէս այս է լինում անպարզութեան հետեանքը. մի տուն, որ սկիւրի վառարանը կանգնել իր հարստութեամբ, այժմ նա անպարզութեան զոհ ցնացած վշտում է. եղբայր վերջին յուսահատութեան մէջ իրար թշնամանում են, կոտորում են, և անխնայ իրանց օրերը։ Ո՛վ է արեւը այդ տան կործանման պատճառը, եթէ ոչ եղբայր մէջ բարձր դիրք ունեցող տան ղեկավարները, որոնք որ առաջուց չը պարզեցին իրանց մէջ ամեն բան և չը ղեկավարեցին տունը հաստատ օրէնքներով և կանոններով. բռնակալ վարել խաղաց իր դերը և կործանեց տունը։ Եւ որովհետեւ էլ չէր կարելի սպասել, քանի որ եղբայր ղեկավարող զօրութիւնները էին էջամը, անպարզութիւնը, ծածկութիւնը, իրար քեֆին չը դիպչելը և տգէտների վրա թաղաւորող վարքը։

Այսպէս էլ լինելու է մի ընկերութեան ապագան, երբ որ նա ղեկավարվում է նահապետական վարկով և կանոններով, որոնք թէ և ընդունված էին մի ժամանակ, երբ ճշմարտութիւնը և միաձուլութիւնը թաղանթում էին ժամանակակից մարդկանց վրա, բայց քանի որ հարազատ հայրը այսօր կարողանում է ճշնել և զրկել իր որդուն, որդին հօրը, եղբայրը եղբոր, միայն թէ կարող լինեն մի կերպ օրէնքի պատժից պրծնել, վաճառող նահապետական կարգերը, կանոնները անկարող լինելով կառավարել ներկայ աշխարհը, մէջ մտաւ գրաւոր, բայց հազար անգամ փորձված օրէնքը, որի հիման վրա զործ բռնող եղբայրները կամ ընկերութիւնները փոխադարձ ապահոված են լինում իրար վիճակը և ապագայ դառնութիւնների և սրտնեղութիւնների առաջն առած։

Լ. Բ. Փիլիպովսկի

ՆԱԽԱԿ ԲԱՊՈՒՅՑ

Մարտի 27-ին

Կարգադրով «Մշակի» № 21-ում Բագովցի հարգած պ. Ներսիսյանի մասին չարամտութեամբ յորհնած կեղծ լուրը մենք չը դարձանք, որովհետեւ մեր լրագրութեան մէջ սովորական է դարձել այդպիսի չինձու լուրեր կամ զբոսարարութիւն տարածելը ըստ մեծի մասին Բագովցի Բաւարական է, որ մինչ միւսի դէմ նախանձ կամ ոխ ունենայ, հեշտութեամբ կարողանում է լրագրներին միջոցով վրէժխնդիր լինել։

Լրատուն ինձ ևս թէպէտ կապել էր յիշեալ պարոնին, հետ ժամանակով և իմ զվարճ խաղալու նպատակով, բայց ես միայն նոյնիման ընդունաւ, պատիւ չը համարեցի պատասխանել այդպիսի ստորաքաղաք և անաղին վարմունքին։

Նոյն նիւղամով լրատունը կրնայ ըստ իմ վրէժի հանած չը համարելով իրկին անգամ «Մշակի» № 32-ում իր կիսատ չարայայտ կատակ և խաղը լրացնելու համար՝ առաջվանից ասելի ճարպիկութեամբ կարողացել է մի ասելի գերադասեցը հարբել, յղանալ և ծանախ Բագովցու, իսկ միջոցի Ուղուն-Աղայում և այնտեղից վարպետութեամբ խմբագրին հասցնել կրկին նրան պատիւը։

Թեամբ խմբագրին հասցնել կրկին նրան պատիւը, նրա լրագրի և այլոց վարկն ու պատիւը վայր ձգելու նպատակով։

Այդ երկրորդ անգամ զբարարութեան հեղինակ իր չարամիտ հարազատութեամբ ապացուցեց, որ կարող է խմբագրին պատրել իր չար և յուր խաղձանքը կատարելու։

Միանգամայն արդար խոցով յայտնում եմ, մեծարդոյ խմբագրի, որ այդպիսի մի օղորական ոչ պատահած և ոչ ընթերցիչ հրաւիրված է մեր տուն։ Այդ օտարական լրատուն կեղծ անուան երեսակալական և նախանձու բնատրութիւնից յառաջացած ցնորք է, որ կենդանի խեղճ չունենալով թշնամարար կարողացել է լրագրել իմ վրա զբարարութիւն ինձ սիրող և յարգող բարեկամներին իմ դէմ թշնամացնելու և անուան արատ ձգելու նպատակով։

Լրատունը կթէ այդ ճշմարիտ իրողութիւն է, և ոչ թշնամութեամբ հարած զբարարութիւն, թող աղատ համարձակ դուրս հանէ հրապարակ իր անուանը։

Ճշմարտութեան զօրավիզն լինելու համար յուսով եմ, թէ չէք զլանայ սրան հարգողներ «Մշակի» ընթերցողներին։

Խորէն քահանայ

ՆԵՐՍԻՍ ԼՈՒՐԵՐ

Շարաթ օր, ապրիլի 4-ին, և երեքշաբթի օր, ապրիլի 7-ին «Մշակը» տոնելի պատճառով հրատարակելու չենք, այլ «Մշակի» հետեալ № 37, հը հրատարակենք ճիշդաբանի օր, ապրիլի 9-ին։

ԲԱՊՈՒՅՑ մեզ ուղարկված է հետեալ յայտարարութիւնը տալիսը։ «Պատիւ ունեւ ծանուցանել Բագովցի հատարակութեան, թէ Բագովցի սուրբ Աստուածածին եկեղեցու երկայնքի թաղանթաւորութիւնը իր լինի Մարգարիտական ընկերութեան դահլիճում ներկայ տարվայ ապրիլի 13-ին, իսկ կրկնաժողովը ապրիլի 16-ին Զանկայի գրքերի կողմից կը կարգաւ պայմանագրելու (կծնդիւն) ընկերութեան գրառանքը, առաւօտեան 9 ժամից, մինչև 12 ժամ, ամենայն օր, բայց կիրակի և տոն օրերից»։

Մարտի 28-ից, ԲԱՊՈՒՅՑ մեզ գրում են։ «Չորս օր է, ահա, որ այստեղ մեծ իրարանցում կայ ժողովրդի մէջ զբոս պակասութեան պատճառով Բագովցու մեջ ըստ բերած ջրերը, որոնք առանց այն էլ չէին բաւականացնում բնակիչներին, և որոնց առիթով միշտ կռիւներ էին պատահում ջուր կողմերի մէջ, այժմ բոլորովին ցամաքել են։ Չը նայելով որ վերջերս Բագովցու բնակիչներին թիւը քառասույսով է դարձել, համեմատելով երեք չորս տարի սրանից առաջ բնակիչների թիւի հետ, սակայն ոչ ոք չէ մտածում քաղաքի ջրի քանակութիւնը նոյնպէս անկախում մասին։ Աւելի կասեմք. եղած աղբիւրներն էլ պահպանելու վերաբերմամբ անհոգ ենք և իսկ այդ անհոգութեան շնորհով է որ այսօր խմելու ջուր չունենք։ Ջրի կտրվելու բուն պատճառը, ի հարկէ, դեռ ես յայտնի չէ։ Յայտնի չէ նոյնպէս թէ երբ կը հարթվեն ասելով ծանապարհները, և ջուրը նորից կը տրվի ծարաւած ժողովրդին, որ այժմ ստիպված է կամ ջրհորների աղի ջրերը խմել և կամ քաղաքից դուրս հոսող դետակներինց է ջուր կրում։ Բայց ընդհանրապէս մի պատկառելի գումարի հանող տարեկան եկամուտ, դարմանալ է որ այնպիսի անհրաժեշտ կենսական պիտոյքի համար, ինչպէս խմելու ջուրն է, ոչինչ չէ կամենում ծախսել և մենք ջրից պիտի զուրկ մնանք։ Իսկ Բագովցու իր դիրքով ամեն տեսակ յարմարութիւններ ունի կանոնաւոր ջրանցք ունենալու»։

Երկուշաբթի, մարտի 30-ի նիստում, քաղաքային Գուման զբաղեցաւ թիֆլիսի ջրանցքից օգտվելու կանոնները ընդունելու հարցով։ Ինչպէս ինչպէս թիֆլիսից յետոյ վճարվեցաւ ջրի վերոն ծախսը 1/3 կոպէկով։ Մէկից մինչև չորս զուրկ տաւար ջուր խմացնելու համար սահմանու է 1 կոպէկ, իսկ 1—4 ոչտար կամ այծ ջուր խմացնելու համար սահմանու է 1/2 կոպէկ։ Ջրանցքից օգտվելու կանոնները միւս կէտերը կը ընդունի յաջորդ նիստում։ Չայնաւորներից մէկը հարց տաւարներից վարպետները, թէ արդեօք ճիշդ են այն լուրերը, որոնք տարածված են քաղաքում ջրանցքի չինութեան վշտանալու մասին։ Կուրի յորդանալու պատ-

ճառով։ Կառուցանող յանձնաժողովի անդամներից մին, պ. Փոն-Վէյսնհոֆ, որը մի քանի ուրիշների հետ միասին ընկել էր անձամբ ջրանցքի վնասված մասերը Աւաղայում, յայտնեց, որ վնասը համար է մինչև 10 հազարի, և այնքան չէ, որ քան սկզբում կարծում էին շատերը, լուրերի վրա հիմնվելով։ Չայնաւորներից պ. պ. Բէյրութեան և Մ. Թամազեան տաւարներից, որ առաջիկայ նիստերից մէկում ընկել այն հարցը, թէ արդեօք ջրանցքը սկզբից որոշված նախագծի համեմատ է չինվում թէ ոչ, որի համար, ի հարկէ, հարկաւոր կը լինի վերատեսակել ջրանցքի ամբողջ շինութիւնը։

Աւարտելի Պէշտ քաղաքում իօլիւրա երեսու պատճառով, Օղէսայում վեցօրեայ կարանտին է նշանակված դոնայիան նաւահանգստից եկող նաւերի համար։

«Մշակի» № 35-ի մէջ տպված «Հայունեաց Բարեգործական ընկերութեան» յօդուածի վերջում մի սխալ է մտել. Հայունեաց Բարեգործական ընկերութիւնը ունի 166 իսկական անդամուհի և 25 իշտական անդամուհի, մինչդէռ անցեալ համարում բոլորը միասին սխալմամբ 166 էր ցոյց տրված։

ՆՈՒՅՈՒՅՑ մեզ գրում են մարտի 27-ին, որ թիֆլիսից Նուրի եկող մի ֆուրգոն, կախ գիւղի մօտ, ենթարկվեցաւ Գուրմուխի դետի կատաղի հոսանքին։ Ֆուրգոնը բարձած է լինում զվարարապէս չաքարով։ Չը նայած ֆուրգոնի տիրոջ և ծառաների բոլոր ջանքերին, ֆուրգոնը ուղիղ գետի մէջտեղում չուտ է գալիս. ծառաներից մէկը մնում է 200 պոլից ասելի չաքարի ծանրութեան տակ և մեռնում։ Առաջին անգամ չէ, որ Բուրմուխը յորդանալով մեծամեծ վնասներ է տալիս։

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Մարտի 21-ին, Լուսաւորչի շարաթ օրը, կատարվեցաւ Սմբատ Դան-Աղլիի մանկավարժական և գրականական գործունէութեան քսան և հինգամսեայի տոնակիւնը։ Մի համեստ ճաշկերպով նրա նախկին աշակերտ Ս. Մամիկոնեանի տանը։ Ներկայ գտնվողները նրա նախկին աշակերտներն էին, որոնց մէջ կային և երեք համալսարանականներ, մի քանի համակրող ուսուցիչներ և կողմնակի անձինքները»։ Կրօնիցս Դերմանեան և Մեքենա Գանեսանց։ Մանրամասնութիւնները միւս անգամ։

Յորդաւատ անձնիւնի և Կուր դետի յորդանալու պատճառով Անդրկովկասեան երկաթուղու գծի վրա մի քանի տեղերում կամուրջներ և գծի շինութիւնը վնասվել և փչացել են։

«Մշակի» անցեալ համարում հարգեցիք, որ Գուրմանտեսական և Տիֆլիսական ընկերութեաների խառն ժողովում կարողացեցաւ մի ղեկուցում Արկաւի ջրերի նշանակութեան մասին։ Ժողովը միաբերան այս անգամուհի յայտնեց, որ Կովկասի ջրերը ասելի պէտք է ծառայեն իբրեւ ուղղման միջոց։ Յայտնի է, որ գետերը կարող են ծառայել և նաւահանգստութեան համար։ Սակայն ջրային հարցը Կովկասում, մանաւանդ Անդրկովկասում այնպիսի սերտ կապակցութիւն ունի ամբողջ երկրագործութեան և դիւղամանտեսութեան հետ, որ մի փոքր սահմանափակելով ջրերից, իբրեւ ուղղման միջոցից, օգտվելու տղատութիւնը, կարելի է մեծ հարուած առաւ մեր երկրի տնտեսական զարգացմանը։ Անդրկովկասի մի քանի տեղերը ոչ թէ միայն ջրառատ չեն, այլ և ջրի անաղին կարօտութիւն ունեն։ Յայտնի իրողութիւն է, թէ Արարատեան դաշտում ջրի ինչպիսի սով է, Նախիջևանի գաւառում ջրի հարցը վաղուց ի վեր մի անուշեղի խնդիր է դարձել. ջրի պակասութեան պատճառով դիւղացին չէ կարողանում հողը մշակել, և դուրս գալ իր տնտեսական ճգնաժամից։ Անհրաժեշտ է, որ ոչ թէ միայն գիւղացին անարդի կարող կարող լինի օգտվել գետերից իր դիւղամանտեսական պիտոյքների համար, այլ և միջոցներ ձեռք առնելու ջր անցքի միջոցով, որի համար թէ և մի քանի փորձեր եղան, բայց տարաբարբար շատ անաշուղ կերպով։ Ուստի չէ կարելի կատարել համակրութեամբ ջր վերաբերվել մարտի 28-ի ժողովի ընդունած սկզբունքին, թէ Կովկասի ջրերը պէտք է ամենից առաջ ծառայեն իբրեւ ուղղման միջոց, և նաւահանգստութեան խնդիրը չը պէտք է արդեւ լինի այդ զվարար նպատակի

համար։ Ժողովը վճռեց խնդրել պետական կառավարութեան միջոցով փոխադարձ կրէդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը Բանկի 1886 թվ. հաշիւներից և խորհրդի տուած բացատրութիւններից երևում է, որ ընկերութեան անդամների թիւը 1887 թվ. յունվարի 1-ին հասնում է 1,105-ի, 1886 թվ. դուտ արդիւնք եղել է 121,978 ռուբլի, որից դուրս գալով 72,745 ռուբլի բողբված մուրհակների հաշիւն, մնացած 49,233 ռուբլին պէտք է տրվի անդամներին իբրեւ ղիփիւնդ, մոցնելով որոշեալ մասը պահեստի գրամազվի մէջ և այն Բանկի 1886 թվականի գրութեան և գործունէութեան հաշիւը լսելուց և ընկերուց յետոյ, ընդհանուր ժողովը մի քանի պատճառաւ անձինք ընտրեց, — բանկի կառավարիչ նորից միաձայն ընտրվեցաւ պ. Աղիլիսանով. վերատեսակական յանձնաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ. պ. Տէր-Ալեքսանդրեան, իշտական Արութիւնի և Գուրմանով։

Մարտի 29-ին Գաղաքային տան շինութեան մէջ կայացաւ թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Բանկի 1886 թվ. հաշիւներից և խորհրդի տուած բացատրութիւններից երևում է, որ ընկերութեան անդամների թիւը 1887 թվ. յունվարի 1-ին հասնում է 1,105-ի, 1886 թվ. դուտ արդիւնք եղել է 121,978 ռուբլի, որից դուրս գալով 72,745 ռուբլի բողբված մուրհակների հաշիւն, մնացած 49,233 ռուբլին պէտք է տրվի անդամներին իբրեւ ղիփիւնդ, մոցնելով որոշեալ մասը պահեստի գրամազվի մէջ և այն Բանկի 1886 թվականի գրութեան և գործունէութեան հաշիւը լսելուց և ընկերուց յետոյ, ընդհանուր ժողովը մի քանի պատճառաւ անձինք ընտրեց, — բանկի կառավարիչ նորից միաձայն ընտրվեցաւ պ. Աղիլիսանով. վերատեսակական յանձնաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ. պ. Տէր-Ալեքսանդրեան, իշտական Արութիւնի և Գուրմանով։

Ձանդեղուր գաւառի Երեմի Անիկի դիւղից մեզ գրում են. «Մեր գաւառում ես պատրաստութիւններ են տեսնում ղիստորագրութեան համար։ Ժողովուրդը արդէն տեղեկացել է, որ մահմանականները ղիստորական ծառայութեան փոխարէն փող պէտք է հատուցանեն»։

Այս տարի հեղեղները Անդրկովկասում ստորակական բան են դարձել։ Լրագրները հարգողում են որ Վարսում ջրերը յորդացել են և հեղեղել են քաղաքի մի մասը, որից կողմից լսվում է որ թիֆլիսից դէպի Ախալցխա տանող փոստային ճանապարհը փչացել է Կուր գետի անշախ մեծահարուց, այնպէս որ փոստը դէպի Ախալցխա դեռնում է այժմ Ալեքսանդրօպոլի վրայով։ Ախալցխայի և Ախալքալաքի մէջ փոստային հաղորդակցութիւններն էլ հեղեղի պատճառով կտրված են։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրատարակեց ուսուներէն լեղուով մի քանի մանրամասնութիւններ ղիստորագրութեան մասին, որոնք տպված են առանձին թիւերի վրա։ Այդ մանրամասնութիւնները թողված են 1886 թվ. մայիսի 28-ին Բարձրագոյն հաստատված կանոնադրութիւնից, որը տպվեցաւ «Մշակի» 1886 թվականի № 100 և 101-ի մէջ։ Գրա հետ միասին քաղաքային վարչութիւնը յայտարարում է, որ արդէն կազմված են ներկայ 1887 թվականի դիւղագրագրութեան կ ո չ ն ա գ ի ե ռ ը, որոնց մէջ ցուցակագրված են 1886 թվականին քսան տարեկան հասակի հասած անձինք։ Այդ կ ո չ ն ա գ ի ե ռ ը կը կարվեն քաղաքային վարչութեան չինութեան մէջ ապրիլի 1-ից մինչև 15-ը, և ամեն մարդ իրաւունք ունի այդ ժամանակամիջոցում յայտարարել կոչնագրերի մէջ իր նկատած սխալները և պակասորդները։ Ռուսերէն լեղուով տըպված վերոյիշեալ թիւերը կայացած են քաղաքի փողոցների յայտարարական սխալների վրա եւ։ Ձինուորագրութեան վերաբերեալ մանրամասնութիւնները Գաղաքային վարչութիւնը հրատարակելու է նոյնպէս հայերէն և վրացերէն լեղունիւրով։

Մարտի 30-ին Կուրի մէջ, Շաղինօսի քարվանսարայի մօտ խեղդված ջրիկը պարակահապտակ է, Ղազարեան աղգանաւում։ Նոյն օրը Կուրի մէջ խեղդվեցաւ և մի ուրիշ թուրքիւն։

Հայունեաց Բարեգործական ընկերութիւնը անցեալ տարի ասելի քան վեց հազար ռուբլի ծախսեց ս. Նշան եկեղեցու գաւթում օրիորդաց դպրոցի շինութիւնը կառուցանելու համար։ Չը նայած, որ ընկերութիւնը իր սուղ միջոցներից մի այդպիսի խ ո չ ո ռ գումար ծախսեց շինութեան վրա՝ իր օգնութիւնը խնայելով ուրիշ բոլոր նը պատկանների համար, և չը նայած որ դեռ միմիայն մի տարի է անցել, ահա դպրոցի շինութիւնը շատ փոքր է երևում, և այնքան փոքր, որ նոյն իսկ մի հատ ասելով սենեակ չը կայ դուրսից մի դասարան բանալու համար։ Ընկե-

զու, մեղադրեց՝ պահեստի կառավարիչ գեներալ-մայոր Ալեքսանդր Բորիսյանին և պայթուցիկները բաժնի գլխավոր փոխ-գնդապետ Եսայի Ծմիկյանին՝ արտաքույն կարգի ճեղքումներ ունեցող ապօրինի անդործունեության մեջ, և իրանց պաշտօնը կատարելու անհոգության մեջ, իսկ կապիտան Գրիգոր Աֆենդյանին և նահանգական սեփականատեր Անդրեյ Գրաբենկոյին անպարտապահության և իրանց պարտաւորութիւնները կատարելու անհոգության մեջ, որի համար և դատաւարանը, զրկելով զօրք առանձնակի իրաւունքներից և անձնական և կարողութեամբ սեփականացրած իրաւունքներից, հանել զինուորական վարչութիւնից, և զրկելով ազնականութիւնից, աստիճաններից, առանձնակի նշաններից, ուղարկել Սիբիր այնտեղ բնակվելու համար, Բորիսյանին և Ծմիկյանին Տոմսկի նահանգը, իսկ Աֆենդյանին և Գրաբենկոյին Տօբոլսկի նահանգը՝ Պահեստի վերակացու Օխտարին արդարացրած է:

ՀԱՌՄ, 30 մարտի խաղացող թագաժառանգ իշխանը հիւանդացաւ թեթիւ կարմրուկով: ԼՕՆԻՍՆ, 30 մարտի Հայդ-Պարկում կայացաւ մի մեծ մանկիկներու օրը, որը կազմեցին Գաղստօնի և Պարսկի կողմնակիցները իբրեւ բողոք իրանցական դատաւարան-բեական բիւլի դէմ: Մի քանի հետեւորներ, ի միջի որոց և պարսկական անդամները, ճառեր էին արտասանում մինչև ժամը 3 և 50 րոպէ կէտրից յետոյ: Անկարգութիւններ չեղան:

ՕԴԵՍՍԱ, 31 մարտի: Շաբաթի դէմը բարձրացաւ և շաբաթի առաջի դէմը 3 ր. 30 կայէկից բարձրացաւ մինչև 4 ր. պուրը: Սկսեց և արտահանութիւն դէպի արտասահման: Բերկիցաւ միանգամայն 10,000 պուր: Անկատարելութիւն ծովի իջեցրին «Կուրանեց» նաւը: Միւս նաւերը, ի միջի այլոց և դրանակի «Սիւսպի» իջեցնելու տեղի կունենայ մայիսին:

ԼՕՆԻՍՆ, 31 մարտի: Երէկվայ միախառն մասնակցութեամբ էին մինչև 100,000 մարդ: Անկարգութիւններ չեղան: Գաղստօնին հանդիսաւոր ցրցեր արեցին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 ապրիլի: Նկատ դեռ բացվեցաւ և խաղացող ծովակից սկսեց առաւել լողալ: Առևտրական նաւահանգիստները կազմակերպելու համար նշանակված յանձնաժողովը հերքում է «Новое Время» լրագրի հաղորդած այն լուրը, իբր թէ եկող ապրիլի սկզբին, ծովային ջրանցքի միջով չի թող տրի նաւերի դէպի Պետերբուրգ անցնելը, որովհետև ջրանցքը կարօտ է նշանաւոր վերանորոգութեան և պէտք է խորացնել: Ջրանցքի խորութիւնը ամեն տեղ ունի ծրագրով որոշված չափը, այն է 22 ֆուտ: Լրագրիները հաղորդում են, որ բացի դրոշմաւոր տուրքի և դրուագաւոր թղթերի դիմ մեծացնելուց, նախագծվում է և մուրհակային դրոշմաւոր թղթի դիմը բարձրացնելու, որ և մտադրութիւն կայ գործադրել յուլիսի 1-ից ներկայ թէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 31-ին

Ռուսաց 1 ռուբլ	Հոգանի վրա արժէ	211 1/2	պէնս.
—	Համբարգի վրա	181	պֆ.
—	Փարիզի վրա	224	սան.
Ռակի	արժէ	9	27 կ.
Մաքսային կուպոններ	—	179	50 >
Արժաթ	—	1	37 >
Բորսային դիվիդենդներ	—	4 1/2	60/0
Պետակ. բանկ. 5/0 տոմս	1-ին շրջանի	100	—
—	—	99	25 >
—	—	98	87 >
—	—	99	12 >
—	—	98	87 >
—	—	—	—
Արևելեան 5/0 փոխառութ. 1-ին շրջ.	99	37 >	
—	—	99	50 >
—	—	99	50 >
Ներքին 5/0 առաջին փոխառութ.	247	—	
—	—	231	—
5 1/2/0 ընկաւ	—	102	75 >
Ռակիայ ընկաւ	—	193	25 >
Եօթերորդ կոնսոլիդաց. փոխառութիւն	—	165	50 >
Նոր երկաթուղային ընկաւ	—	98	50 >
5/0 գրաւական թղթեր կարւած.	—	—	—
փոխ. կրեդ. ընկ.	—	161	75 >
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	—	98	75 >
5 1/2/0 գրաւական թղթեր խորհրդի կարւած. բանկի	—	97	—
60/0 գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	—	102	25 >
—	—	101	25 >
—	—	101	75 >
—	—	101	75 >
—	—	103	—
—	—	101	—
—	—	101	50 >
—	—	101	50 >
—	—	27 և 43 տ.	—
—	—	18 և 43 տ.	—
Վ. օրժիւկ-Կամսկի բանկի ակցիաները	617	—	
Ռուսաց երկաթուղիների գլխավ. ընկ.	280	—	
Ռերինսկ-Վ. օրժիւկ ընկ.	101	75 >	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրիւ-դացիները	94	87 >	
Պակվայի քաղաք. օրիւդացիները	95	87 >	
Օդէսայի	93	37 >	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օր.	—	—	
Պետական բանկի 6-դ հրատարակ-ված ակցիաները	—	—	
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը	—	—	
Փոփոխութիւնները	—	—	

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Կենսաստանի Միկայիլովիչ ԱԼԻՍԱՆՕՎ իր քոյրերով, սրտի ջաւաք յայտնելով իրանց հօր ՄԻԽԱՅԻԼ ԵԳՐՈՎԻԶ ԱԼԻՍԱՆՕՎԻ մահվան մասին, խնդրում է ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուզարկաւորութեան հանդիսին, հինգշաբթի, Ապրիլի 2-ին, առաւօտեան 10 1/2 ժամին, իր սեփական տանից Սերգիեյեվայա փողոցում, դէպի Մոզնու Ս. Գեորգ եկեղեցին: Հոգեհանգիստներ կատարվում են երեքշաբթի մարտի 31-ին և չորեքշաբթի ապրիլի 1-ին, երեկոյան 7 ժամին:

ԿԱՆՎԱՅԻ ՎՐԱ ԿԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԾՆԱԳԻՐ“

Աշխատութիւն ՎԱՐԳԱՆ ԼԻՍԻՑԵԱՆԻ

Լոյս տեսաւ և ծախվում է Կենտրոնական գրադաձառանցում, եղբ. Աբովյանների և Ժիրարդի խանութներում: Գինն է 20 կոպէկ թիֆլիսում: Օտարաքաղաքացիք պէտք է զիմեն հետեւեալ հասցեով. Тифлисъ. Центральная книжная торговля

2—2

Պատիւ ունեւմ յայտնելու Թիֆլիսի հասարակութեանը, որ Ձառկի երկրորդ օրից՝ ԱՋՆՈՒԱԿԱՆ Ն. Պ. ԼՕՐԻԿԻՊԱՆԻՉԷԻ „ՏՐԱՄՎԱՅ“ Բաժնեկցայում սկսվելու Ժողովրդական դուրձութիւնների ամարային սեղօնը: Ամենայն օր, երեկոյան ժամը 4-ից մինչև 11-ը, կատարեալ խօրով (38 մարդուց), նուազապէս պ. Գրաւիչի անմիջական ղեկավարութեան ներքոյ, կը տրվեն ԿՕՆՏԵՐՆԵՐ, որոնք բաղկացած կը լինեն ամենաընտիր ժամանակակից պիէսաներից:

Մ Ո Ւ Տ Գ Ը Զ Ր Ի Է

Ինչպէս բաժնեկցան, նոյնպէս և ղերբաւր էլի կիսով չափ մեծացրած են: Առանձին կոնցերանների և Ժողովրդական դուրձութիւնների ժամանակ կը շինվին առանձին տեղեր՝ չնչին վարձով՝ ինտելիգենտ հասարակութեան համար: Գարեջրի պահեստը անցնել տարվանից տոսն անգամ մեծացրված է. ամարվայ համար պատրաստված է մեծ քանակութեամբ լաւ տեսակի բաւարսիւ և սև գարեջուր: Գարեջրի գնահատողները և քաջ տեղեակները հրաւիրված են ամարվայ համար պատրաստված էրեքշաբթի ձմարտութեան մէջ համադրվու համար: Ձատկի երկրորդ շաբաթից սկսած, չորեքշաբթի օրերը տեղի կունենան Ժողովրդական տանձին դուրձութիւնների լրախաղաներով, հրախաղութիւններով, օդափամփուշտներով, և ուրիշ խաղերով, որոց մասին կը յայտարարվի ափիշաներով և տեղական բոլոր լրագրիներով մէջ յայտարարութիւններով: Բաժնեկցայում միշտ կայ ամեն տեսակ ցուրտ ուտիլիքներ և զովացնող ջրեր (նոյնպէս և քաղցրեղէններ), խմորեղէններու ծխախոտ:

1—3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григорія Арзруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

(2.)

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕՐՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԳԵՂ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան ղեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակկէրի, Սէնչիկովի և Ագմուրովի ղեղաւնեւում. ԲԱԳՈՒԻ մէջ՝ Բէկկէրի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍԻՄ՝ Կօհօշեղի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօնեղի մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԲՈՐԻՄ:

(2.)

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԵՂԲԱՐՑ ԺԱՄՀԱՐԵԱՆՑ

Մ Օ Ս Կ Վ Ա Ց Ո Ւ Մ

Այն պարոններին, որոնք ցանկանում են ԱՊԱՀՈՎԵԼ առաջին և երկրորդ փոխառութեան ՏՕՄԱԿՆԵՐԸ մեր բանկում, խնդրում ենք ուղարկել ամեն հատի համար 60 կոպէկ, և 10 կօպ. անդորարդի համար առանձին:

2—10

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисъ (Графская ул., противъ Музея). ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍՏԱՆ ԱՊՐԱՆԲԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍԻՄ (Գրաֆսկայա փողոց, Մուշէի դիմաց):

Ձառաղան դոյնի ԱՆՎՆԱՍ ՆԵՐԿԵՐ, ՁՈՒՆԻ ՆԵՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, բացատրութիւնների հետ միասին: Վանի, զաֆրան, հիւ, մէկահոտ ընկույզ և ծաղիկ, կիւրծի և վարդի իւղ, նայնջային ջուր, վարդաջուր, և ուրիշ ՆԻԹԵՐ՝ ՋԱՏԱԿԱՅԻՍ ՄԱՐԵԼԷՆԵՐԻ և անային տնտեսութեան համար: Գեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ ԹԻՖԼԻՍԻՄ, ԵՒ ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում:

Այն անձինք, որոնց մօտ գտնվում են

Վ Ա Ռ Վ Ա Ռ Է Ի

ԲԱՃԱՆՈՐԴԱԹԵՐԹԵՐԸ, թող բարեհաճեն մինչև ապրիլի 10-ը ուղարկել ԿԱՐՍ, Պօղոս Դօմինիկեանցին:

1—2

„ՎԻԵՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(Вѣнскій магазинъ)

Գօլովնիսկի պրօսպէկտի վրա, Մղիվանի տանը.

Պատիւ ունեւմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ մօտ օրերս ստացայ ՎԻԵՆԱՅԻ, ՎԱՐՇԱՎԱՅԻ և ՄՕՍԿՎԱՅԻ ամենաառաջնակարգ գործարաններից մեծ քանակութեամբ ՏՂԱՄԱՐԳԱՆՑ և ԵՐԵՎԱՆԵՐԻ զարնանային և աշխանային պատրաստի ՀԱԳՈՒՍՏԵՐ ամենավերջին ձևի: Գները ամենի համար ՄԱՏՁԵԼԻ և ձեռնառու են: Վ. Խուզավերգեանց

2—10

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Պապիրոսի ԹՂԹԻ տետրակներ և ԳԻԼՋԱՆԵՐԻ, պահեստ ամեն տեսակ թղթի և կարտօնի

Ս. Մ. ԱՆՆՆՈՎԻ

Մեծ ընտրութիւն պապիրոսի թղթի տետրակների և զիւղաների իսկական սիմիդ-րի թղթից, փարիզի և Վիեննայի յայտնի գործարանների: Կեղծումներին առաջն տանելու համար պապիրոսի թղթի տետրակների իւրաքանչիւր թերթիկը կրում է ֆիրմայի անունը ՌՈՒՍԱՑ և ՀԱՅՈՑ լեզուով: Պրէյսկուրանները անվարձ են ուղարկվում առաջին պահանջման համեմատ: Հասցեն. Բօսուով (Գօնի վրա) Ս. Մ. Աննային. Ростовъ (на Дону) С. М. Ананову.

4—10

Լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում, Եւրօպական նօտաներով, „ԲՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ“ երգարանը, աշխատասիրութիւն ՂԱՋԱՐՈՍ ԲԱՀԱՆԱՑ ՅՈՎԱՍԼԵԱՆԻ, որը պարունակում է իր մէջ ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որոնք յարմարեցրած են դաշնամուրի վրա նուագելու: Իւրաքանչիւր օրինակի գինն է ճանապարհածախսով 2 ռուբլի: Վաճառվում է Թիֆլիսում պ. Յ. Սուզանանցի երաժշտական գրականութեամբ և միւս գրավաճառանոցներում, նոյնպէս և աշխատասիրողի մօտ: Հասցեն.—Թիֆլիս—Հաւարար, Գաղարոս քահանայ Գովաշիւհան:

4—10